

Խ. Լավշյան

ՈՐՈՇ ԾԱՂԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՄԵՐՄԵՐԻ ԾԼՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դրականության մեջ ծաղկաբռյաների սերմերի ծլունակության մասին մենք հանդիպել ենք միայն Ա. Յ. Դրեյման և Գ. Ե. Կիսելև: Լեռնիկ և սուստայությունը այս էլ ոչ մանրամասնություններով: Այդ գրքի ավալաները մեր պայմաններում ստուգելու համար կատարել ենք հետեւյալ փորձը: սերմերը հավաքված են եղել Բուսաբանական այգուց ծաղկի բաժնի կողմից տարբեր տարբիններում: Սերմերը պահված են եղել թղթե տոպրակների մեջ չոր սենյակում, սենյակի ջերմությունը ամառը եղել է  $25-35^{\circ}\text{C}$ , իսկ ձմեռը՝  $8-10^{\circ}\text{C}$ :

Փորձը կատարված է 1947 թվի ապրիլ և մայիս ամիսներին, տեսլ է 40 օր:

Այդ ժամանակաշրջանում փորձավայր հանդիսացող սենյակում միջին ջերմաստիճանը եղել է  $17-22^{\circ}\text{C}$ : Փորձի համար ամեն մի ծաղկաբռույսի տվյալ տարվա սերմից վերցրել ենք 100 հատ, սուր դանակով կտրել, որոշել առողջ սերմերի քանակը, որը տատանվում էր  $45-100$  սահմաններում: Փորձնական ցանքսերի համար օգտագործել ենք ընդհանուր սերմերից  $100$ -ական հատ: Սերմերի ծլունակությունը որոշել ենք երկու ձևով: մի գեպքում ցանել ենք ուղղակի խոնավ ավազի մեջ սովորական ցանքսի նման, մյուսը՝ ծլեցրել ավազով լիքը արկղում փռած ծծան թղթի վրա, ծածկելով այն դարձյալ խոնավ ծծան թղթով: Երկու ձևով փորձարկված սերմերն էլ տվել են նույն արդյունքները:

Ցուրտքանչյուր չորս օրը մեկ անգամ կատարել ենք հաշվառում, որոշել նրանց ծլման տոկոսը:

Ծլման տոկոսները որոշել ենք առողջ սերմերի քանակից: Արդյունքները զետեղված են աղյուսակում:

| Բույսի անունը                | Սերմերի հավաքման ժամկետը | Ծլման տևողությունը օրերում | Ծլման տոկոսը   | Արդյունք |
|------------------------------|--------------------------|----------------------------|----------------|----------|
| 1                            | 2                        | 3                          | 4              | 5        |
| A geratum houstonianum Mill. | 1940<br>1941<br>1942     | 9-80<br>9-80<br>9-80       | 73<br>93<br>94 | 2-8      |
| Alyssum Benthami             | 1942<br>1946             | 5-9<br>5-9                 | 55<br>82       | 2-8      |

| 1   | 2                            | 3                              | 4                    | 5    |
|---|------------------------------|--------------------------------|----------------------|------|
| <i>Antirrhinum majus</i> L.   | 1940<br>1942<br>1944<br>1946 | 9—17<br>9—17<br>9—20<br>9—20   | 72<br>82<br>97<br>98 | 3—4  |
| <i>Calistephus chinensis</i> (L.) Cass.                               | 1940<br>1941<br>1945<br>1946 | 0<br>0<br>9—13<br>9—13         | 0<br>0<br>63<br>65   | 2—3  |
| <i>Calendula officinalis</i> L..                                      | 1944<br>1946                 | 5—15<br>5—15                   | 61<br>84             | 3—4  |
| <i>Celosia cristata</i> L.  | 1989<br>1946                 | 5—17<br>5—17                   | 50<br>71             | 4—6  |
| <i>Coreopsis tinctoria</i> Nutt.                                      | 1944<br>1945<br>1946         | 5—9<br>5—85<br>5—85            | 61<br>94<br>95       | 2—3  |
| <i>Dianthus barbatus</i> L.   | 1939<br>1946                 | 5—40<br>5—35                   | 70<br>97             | 8—10 |
| <i>Dianthus chinensis</i> L.  | 1941<br>1942<br>1946         | 5—30<br>5—9<br>5               | 97<br>99<br>99       | 8—10 |
| <i>Gaillardia pulchella</i> Feng. v. <i>picta</i><br>Gray             | 1943<br>1946                 | 13—30<br>13—35                 | 86<br>80             | 3—4  |
| <i>Gypsophylla paniculata</i> L.                                      | 1941<br>1945<br>1946         | 9—21<br>5—17<br>5—9            | 89<br>91<br>96       | 2—3  |
| <i>Impatiens Balsamina</i> L.   | 1942<br>1946                 | 9—21<br>5—21                   | 52<br>90             | 8—10 |
| <i>Ipomea purpurea</i> Roth.  | 1944<br>1945<br>1946         | 5—13<br>5—13<br>5—13           | 98<br>98<br>99       | 2—3  |
| <i>Matricaria eximia</i>  | 1941<br>1944<br>1945<br>1946 | 9—25<br>9—18<br>9—18<br>9—18   | 25<br>90<br>92<br>95 | —    |
| <i>Nicotiana alata</i> Link.  | 1941<br>1946                 | 9<br>9                         | 74<br>85             | 8—10 |
| <i>Perilla nankinensis</i> (Lour.) Deence.                            | 1943                         | 9—18                           | 64                   | 2—3  |
| <i>Petunia hybrida</i> hort.  | 1942<br>1943<br>1945<br>1946 | 9—17<br>9—17<br>5—9<br>5—9     | 79<br>82<br>88<br>95 | 8—10 |
| <i>Pirethrum parthenifolium</i> L. v. <i>au-</i><br><i>reum</i> hort. | 1940<br>1941<br>1943<br>1945 | 17—25<br>13—30<br>5—17<br>5—17 | 12<br>16<br>85<br>87 | 2—3  |
| <i>Rudbeckia bicolor</i> Nutt.  | 1941<br>1943<br>1945         | 9—18<br>9—17<br>9—17           | 45<br>80<br>65       | —    |

| 1   | 2                                    | 3   | 4                           | 5   |
|---|--------------------------------------|---|-----------------------------|-----|
| Scabiosa atropurpurea L.                  | 1940<br>1941<br>1944<br>1945<br>1946 | 13—21<br>13—25<br>13—25<br>13—25<br>13—46 | 10<br>95<br>98<br>98<br>100 | 2—3 |
| Tagetes patula L. v. "Symphonia"          | 1940<br>1941<br>1946                 | 9—17<br>9—17<br>9—17                      | 85<br>89<br>97              | 3—4 |
| Tagetes signata Bartl. v. pumila<br>hort. | 1940<br>1946                         | 9—17<br>9—21                              | 50<br>97                    | 3—4 |
| Verbena hybrida hort.                     | 1944<br>1945<br>1946                 | 21<br>17—40<br>17—40                      | 1<br>60<br>62               | 2—3 |
| Erigeron hybridus hort.                   | 1942<br>1943<br>1946                 | 13—21<br>13—21<br>9—21                    | 69<br>70<br>83              | —   |

Փորձարկված սերմերն իրենց ծլունակությունը պահպանում են՝

երկու տարի Ipomea purpurea, Calistephus chinensis.

երեք տարի Perilla, Gaillardia, Coreopsis, Calendula.

չորս տարի Erigeron, Betunia.

հինգ տարի Scabiosa, Rudbeckia, Gypsophylla.

վեց տարի Tagetes signata, Tagetes patula, Antirrhinum, Ageratum.

յոթ տարի Dianthus barbatus, Dianthus chinensis, Celosia cristata.

Քանի որ վերոհիշյալ կուլտուրաների ավելի հին սերմեր չունենք, ուստի կարելի է ենթազրել, որ այդ սերմերն իրենց ծլունակությունն ավելի երկար ժամանակ կարող են պահպանել:

Մեր փորձեց պարզվեց, որ միամյա աստրան Calistephus chinensis, չորս տարվա ընթացքում բոլորովին կորցնում է իրեն ծլունակությունը: Երկու-երեք տարվա սերմեր մենք չունենք, բայց ընդհանրապես մեզ հայտնի է, որ երկու տարեկան սերմերը երկանի պայմաններում կարելի է օգտագործել:

Մեր կատարած փորձերից կարող ենք եզրակացնել, որ երկանի պայմաններում մի շաբաթ ծաղկաբույսերի սերմերն ավելի երկար ժամանակ են պահպանում իրենց ծլունակությունը, քան նշված է մեզ հայտնի գրականության մեջ:

Վերոհիշյալ փորձի ստացված արդյունքներից պարզվեց, որ ծաղկաբույսերի սերմերի մեծամասնությունը պահպանում են իրենց ծլունակությունը երկար ժամանակ, բացառությամբ միամյա աստրայից և վերբենայից, որոնք շատ շուտ կորցնում են իրենց ծլունակությունը:

Э. Лавчян

## Всходость семян некоторых цветочных растений.

(Резюме)

Нами была исследована всхожесть семян различных цветочных растений в условиях Еревана при многолетнем хранении их. Были исследованы на всхожесть семена различных наиболее распространенных цветочных растений, заготовленных в Ботанич. Саду за время с 1939 по 1946 годы.

Наши исследования показали, что всхожесть семян сохраняется более продолжительное время, чем указано в специальной литературе, за исключением однолетних астр, которые уже через 2–3 года совершенно теряют всхожесть.